

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ՝ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ, ՍԻՐԵԼԻ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ, ԾՆՈՂՆԵՐ...

ՆՈՐ ՈՒՍԱՐԻ՝ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՆՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ՆՈՐ ՄՊԱՍՈՒՄՆԵՐՈՎ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Իսկ 2-ն հանձնել են Սիասնական ազգային քննություններ: 103 դպրոցի հայկական մասնաճյուղի 12 շրջանավարտից մեկը ոսկե մեդալակիր, 3-ը՝ Սիասնական ազգային քննությունների արդյունքում են դարձել ուսանողներ:

Հանդիսավոր օրվան ներկա Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Ամբաստանյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնոր Տեր Կիրակոս Եպիսկոպոս Դավթյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրյանը, Թբիլիսիի Պ. Արամյանի անվան պետհայրերան թատրոնի



նի տնօրեն Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի ԿԳԵ նախարարության աշխատակցուհի Կարինե Մանուկյանը, «Վրացահայերի միություն» հասարակական կազմակերպության նախագահ Մարի Առաքելյանը շնորհավորեցին դպրոցականներին՝ մաղթելով արդյունքի վրա հիմնված նոր ուսումնական տարի:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԴԱՍԱԼԱՅԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԴՊՐՈՑՆ Է՛Լ ԱՎԵԼԻ ԿՆՊԱՍՏԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻՆ

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղում հանդիսավորությամբ բացվեց հիմնովին վերանորոգված հանրային դպրոցը՝ կրթության այն օջախը, որը ստեղծված է 21-րդ դարի պահանջներին համապատասխան, և որտեղ յուրաքանչյուր երեխա հնարավորություն կունենա բացահայտել իր ներուժը:

Այս հիմնանորոգման համար հատուկ շնորհակալություն են հայտնում Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարությանն ու նրա ենթակայության ներքո գործող Ենթակառուցվածքների զարգացման գործակալությանը, ինչպես նաև մունիցիպալիտետի քաղաքապետ Ռոստոմ Մագրաբվիլիձեին, Սակրեբուլոյի նախագահի տեղակալ Էմին Բալոյանին, Դամալա գյուղում Ասպինձայի քաղաքապետարանի ներկայացուցիչ Մարտին Կերեկցյանին՝ ցուցաբերած աջակցության ու համագործակցության համար:

Այսօրվա խորհուրդը կապում ենք նաև մեր 9 շրջանավարտի հետ: Ուրախությամբ են նշում, որ նրանցից 8-ը, բարձր արդյունքներով հաղթահարելով ընդունելության քննությունները, ընդունվել են Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ անվճար ուսուցման համակարգում:

Թող այս դպրոցը դառնա դեպի զարգացում, առաջընթաց ու հաջողություններ տանող լուսավոր ուղի:



ՆԵԼԼԻ ԴՈՒՊՈՒԿՅԱՆ
Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղի հանրային դպրոցի տնօրեն

ՍԻՐՈՎ ՈՒ ՀԱՎԱՏՈՎ ԴԵՊԻ ԳԻՏԵԼԻՔ...



Ի սրտե շնորհավորում ենք Վրաստանի բոլոր դպրոցներին նոր ուստարվա մեկնարկի առթիվ:

Մեր Ծղալթիլայի հանրային դպրոցում, ուսումնական առաջին օրը նույնպես մշվեց տոնական ու ջերմ մթնոլորտում: Դպրոցի բակը լցվեց ծաղիկներով ու ժպիտներով: Հնչեց պետական օրհներգը, ապա՝ դպրոցի տնօրենի շնորհավորական ելույթով սկսվեց միջոցառումը: Խրախուսող, ջերմ ու ոգեշնչող էին նաև առաջին դասարանի դասավարի եւ ավագ դասարանի աշակերտների շնորհավորանքները: Հպարտությամբ նշում ենք, որ

2024/2025 ուստարվա ավարտական 12 շրջանավարտից 5-ը մեդալակիրներ էին՝ 3 ոսկե և 2 արծաթ, 8 շրջանավարտ ընդունվել է տարբեր բարձրագույն ուսումնական անվճար ուսուցման բաժին՝ ապացուցելով մեր դպրոցի կրթական բարձր մակարդակը:

Թող նոր ուսումնական տարին լինի ստեղծագործության, գիտելիքների եւ ձեռքբերումների տարի:

ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՀՊԵՏՅԱՆ
Ախալցխայի մունիցիպալիտետի Ծղալթիլա գյուղի հանրային դպրոցի տնօրեն

ԳՅՈՒԼԻԲԱՂԻ ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ 5 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

Սեպտեմբերի 15-ին Մամնեուլիի մունիցիպալիտետի Գյուլիբաղ գյուղի հանրային դպրոցում տրվեց հերթական ուսումնական տարվա մեկնարկը:

Չնայած ամպամած օրվան՝ հանդիսավոր միջոցառմանը ներկաների սրտերը լցված էին ջերմությամբ:

Ողջույնի խոսքերից հետո, աշակերտներն արտասանեցին, երգեցին, երախտիքի խոսքեր հղեցին ուսուցիչներին՝ քաջ գիտակցելով ուսուցչի կարեւոր առաքելությունն ու անմնացորդ նվիրումը դպրոց հաճախող ցանկացած աշակերտի հանդեպ:

Օրն առանձնակի կարեւոր նշանակություն ուներ հատկապես հինգ առաջին դասարանիների համար, ովքեր, ավարտելով նախակրթարանը, այստեղ են եկել արդեն որպես աշակերտ, եկել են նրանք մի քիչ վախվորած, մի քիչ էլ հուզված, քանի որ սա նրանց կյանքի մի նոր փուլ է, նոր ու անծանոթ, բայց նաև չափազանց հյուրընկալ:




ԱՐԵՊԵՏԱՆ ԴԱՐԻԲՅԱՆ

Մամնեուլիի մունիցիպալիտետի Գյուլիբաղ գյուղի հանրային դպրոցի տնօրեն

ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳԱԼԻՔԻ ՀԻՄՔՆ ԵՆ

Սիրելի՛ աշակերտներ, ուսուցիչներ եւ ծնողներ.

Շնորհավորում են ձեզ եւ հատկապես Նինոծմինդայի մունիցիպալիտետի 38 դպրոցների շեմն առաջին անգամ հատող 208 հրաշամանուկներին, որոնց առջեւ բացվում է նոր ու լուսառատ մի ճանապարհ:



Ուզում են զոհունակությամբ նշել, որ նախորդ ուսումնական տարվա շրջանավարտներից 32-ն արժանացել են ոսկե, իսկ 16-ը՝ արծաթե մեդալների: Մեր աշակերտներն ակտիվ ընդգրկված են տարբեր մրցույթներում, ծրագրերում, ունեն հաջողություններ նաև սպորտի բնագավառում: Ժղամովի հանրային դպրոցի աշակերտական թիմը Նորայր եւ Դավիթ Անտանոսյաններ, Սարգիս Թունասյան, Կամո Դալաչյան, Համլետ Առաքելյան, Վրաստանի ողջ տարածքով անցկացվող դպրոցական օլիմպիադայում սեղանի թեմիսի սպորտածեսում, արդեն երրորդ անգամ զբաղեցրին առաջին հորիզոնականը:

Թող այս ուսումնական տարին լինի արգասաբեր, քանի որ մեր աշակերտները դնելու են ոչ միայն սեփական կյանքի, այլև մեր ապագայի ամուր հիմքերը:

ԴԱՎԻԹ ՁԵՂՔԵՆԻՉԵ

Նինոծմինդայի կրթական ռեսուրսկենտրոնի պետ

ՈՒՊԵՆՉՍԱՆ, ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԱՃԻ ՍՎԻՉՔ

Այս օրը ոչ միայն նոր ուսումնական տարվա մեկնարկ է, այլև ոգեշնչման, նոր բացահայտումների ու աճի սկիզբ: Ծնողների աջակցությունը, սերը եւ խրախուսանքն անփոխարինելի են երեխաների հաջողության գործոն:



Այս նոր ուստարին թող լինի հագեցած ուրախ պահերով, փոքր ու մեծ հաղթանակներով: Մեր գավազների առաջընթացը թող դառնա ծնողներիս եւ ուսուցիչների ամենօրյա հպարտությունը:

Ուրախ ենք, որ դպրոցի անցած ուստարվա շրջանավարտներն իրենց ուսումը կշարունակեն Վրաստանի պետական բուհերում: Նրանցից են Թամարա Իրիցյանը (շահել է 100%-անոց դրամաշնորհ), Մարինա Մուրադյանը, Ռոզա Հովսեփյանը: Ռոման Հովսեփյանը կսովորի Հայաստանում, Արսեն Խաչատուրյանը՝ Ռուսաստանում:

ՄԱՐԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բորժոմի մունիցիպալիտետի Տաբաթուրի գյուղի հանրային դպրոցի ծնող

ԳԻՏԵԼԻՔԸ ՄՇՏԱՄԱ ՈՒՇ Է...



Գիտելիքի ասպետներ լույսով եւ վեհացնող ոգով էր լցված սեպտեմբերի 15-ին Ծալկայի մունիցիպալիտետի Դարագյուղի հանրային դպրոցը: Տոն էր՝ գիտելիքի, գրի եւ դպրության ամենամյա հիաքանչ տոն:

2025-2026 ուստարվա այս հիաքանչ տոնը մեր դպրոցում մշվեց երգերով, պարերով, հիանալի ասմունքներով եւ շնորհավորանքներով:

Մեր հուզմունքն ու հրճվանքը կրկնապատկվում են այն վեհ գիտակցումից, որ Դարագյուղի հանրային դպրոցն իր անցած հետաքրքիր ճանապարհով ու թողած լուսավոր հետազոծով հարածամ կանգուն է՝ պայծառ գալիքի սպասումով:

Ուրախալի եւ հուսադրող է այն փաստը, որ այս տարի ունենք յոթ արեւաման նորեկներ: Նրանք եկել են փոխարին

ներում մեր 3 շրջանավարտներին, ովքեր արդեն կյանքի եւ ուսումնառության նոր փուլում են, որը դպրոցի վաստակաշատ մանկավարժների մեծ ձեռքբերումն է: Նրանց անխնայ աշխատանքի ու աշակերտների աշխատասիրության շնորհիվ, շրջանավարտները՝ Բաղդասարյան Մարինեն, Գեւորգյան Սլավիկը եւ Թորոսյան Հայկն արդեն Թբիլիսիի պետական համալսարանի ուսանող են, որոնցից 2-ը՝ Թորոսյան Հայկն ու Գեւորգյան Սլավիկը՝ ոսկե մեդալակիրներ: Նշենք նաև, որ մեր ոսկե մեդալակիրները բուհում կուսանեն անվճար հիմունքներով՝ իրենց հավաքած բարձր միավորներով:

ՍԼԻՍԱ ԱՐԱՅՅԱՆ

Ծալկայի մունիցիպալիտետի Դարագյուղի հանրային դպրոցի տնօրեն

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՈՐԳԻ ԿԱԼԱՆԴԱՐԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է, ԱՆԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ, ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՎԱՍԱՐ ՈՒ ԱԶԱՏ ՄԻԶՎԱԿԱՅՐ»

ԻՆՉՊԵՍ Է ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԸՆՏՐՈՂՆ ԻՐ ՑԱՆԿԱԼԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՕԳՏԻՆ

«Ի՞նչ ծառայություններ է առաջարկում ընտրական վարչակազմն ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերում մուճիցիպալային մարմինների հոկտեմբերի 4-ին անցկացվելիք ընտրություններին». տեղեկատվությունը, «Վրաստան» թերթի խնդրանքով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահ Գիորգի Կալանդարիշվիլին:

2025 թվականի հոկտեմբերի 4-ին կանցկացվեն մուճիցիպալիտետների ներկայացուցչական մարմնի՝ սակրեբուլոյի եւ ինքնակառավարման քաղաքի/ինքնակառավարման թիմի քաղաքապետի ընտրություններ:

Հոկտեմբերի 4-ին Վրաստանի քաղաքացիները, ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական ընտրահամակարգով երկրի ողջ տարածքով կընտրեն 64 սակրեբուլոյների 2058 անդամի եւ 64 քաղաքապետի:

Սակրեբուլոյի ընտրություններն անցկացվում են մեծամասնական եւ համամասնական ընտրահամակարգերի հիման վրա:

Ինչպես նախորդ ընտրություններին, այս տարի եւս ընտրողների գրեթե 90 տոկոսը քվեարկությանը կմասնակցի նույնականացման եւ ձայների հաշվարկման սարքի օգտագործմամբ:

Հակիրճ ցանկանում ենք նաեւ ներկայացնել տեղեկատվություն, թե քանի՞ քվեաթերթիկ ու շրջանակային ծրար կփոխանցվի ընտրողներին, եւ ընտրողն ինչպե՞ս է քվեարկելու իր ցանկալի ընտրական սուբյեկտի օգտին:

- Նկատի ունեցե՞ք, որ այն ընտրատեղամասերում, որտեղ քվեարկությունը տարվում է էլեկտրոնային սարքի կիրառմամբ, ընտրողներին տրվում է մեկ քվեաթերթիկ, որը բաժանված է երեք սյունակի.

* առաջին սյունակում գրանցված են կուսակցությունների անվանումները՝ սահմանված հերթականությամբ,

* երկրորդ սյունակում գրանցված են ընտրություններին մասնակից քաղաքապետի թեկնածուների հերթական համարը, անուն-ազգանունը եւ ներկայացնող սուբյեկտը,

* երրորդ սյունակում գրանցված են տեղական մեծամասնական ընտրամարզում ընտրության ներկայացված թեկնածուների հերթական համարները, անուն-ազգանունն ու ներկայացվող սուբյեկտը:

Քվեաթերթիկի հետ միասին գրանցողն ընտրողին հանձնում է համապատասխան ձեւաչափի հատուկ, համապատասխան շրջանակ-ծրար:

Նկատի ունեցե՞ք՝ էլեկտրոնային ընտրատեղամաս եկած ընտրողը տվյալ պարագայում չպետք է ընդօժի ցանկալի ընտրական սուբյեկտի համարը, այլ գունավորի սուբյեկտի դիմաց գտնվող շրջանակի ներսի տարածքը, քվեաթերթիկի վրա անցկացված հատուկ շտրիխկոդն ու QR կոդը:

Յուրաքանչյուր ընտրատեղամասի համար հատկացված կոնկրետ քվեաթերթիկն անհնար է օգտագործել մյուս տեղամասերում, քանի որ QR կոդում նշված է տեղամասի ու մարզի համարը: Հետեւաբար, QR կոդի առկայությունը երաշխավորում է քվեաթերթիկի պաշտպանվածությունը, եւ սահմանում է, թե որ տեղամասի համար է նախատեսված այս կամ այն քվեաթերթիկը:

Այն ընտրատեղամասերում, որտեղ քվեարկությունն անցկացվում է առանց էլեկտրոնային սարքերի կիրառման, ընտրողներին հանձնվում է համապատասխան տեսքի/քանակության քվեաթերթիկ:

Միասնական ցուցակում գրանցված ընտրողների, այնպես էլ՝ հատուկ ցուցակում գրանցված այն ընտրողները, ովքեր մասնակցում են մուճիցիպալիտետի քաղաքապետի, սակրեբուլոյի համամասնական եւ մեծամասնական կարգով անցկացվող ընտրություններին, կտրվեն բոլոր երեք տեսակի քվեաթերթիկները:

Հատուկ ցուցակում գրանցված այն ընտրողներին, ովքեր մասնակցում են միայն մուճիցիպալիտետի քաղաքապետի եւ սակրեբուլոյի համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին, կտրվի միայն համապատասխան տեսակի երկու քվեաթերթիկ:

Հատուկ ցուցակում գրանցված այն ընտրողներին, ովքեր մասնակցում են միայն մուճիցիպալիտետի սակրեբուլոյի համամասնական կարգով անցկացվող ընտրություններին, կտրվի միայն համապատասխան տեսակի մեկ քվեաթերթիկ:

Գրանցողն ընտրողների տվյալների սյունակում նշված տեղեկատվության հիման վրա հաշվում է հանձնվող քվեաթերթիկների քանակը:

Ցանկացած ժողովրդավարական հասարակության մեջ հիմնարար է բոլոր քաղաքացիների հավասար մաս-

նակցությունն ընտրական գործընթացին: Քվեարկության արգելքները՝ լինի լեզվական տարբերություն, տեղեկատվության պակաս կամ ֆիզիկական անմատչելիություն, վնասում է այդ սկզբունքներին եւ տեղերում թուլացնում ընտրական գործընթացի ամբողջականությունը:

Ուստի, ընտրական վարչակազմի նպատակն է բոլորի համար ստեղծել հավասար եւ ազատ ընտրական միջավայր՝ անկախ լեզվական ազելիքի: Հենց այդ նպատակով, ԿԸՀ-ում գործում է ազգային փոքրամասնությունների հարցերով գործող աշխատանքային խումբ, որի կազմում են ընտրական վարչակազմի ներկայացուցիչները, Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի եւ պետական գերատեսչությունների ներկայացուցիչները, միջազգային կազմակերպությունների եւ ազգային փոքրամասնությունների ընտրական հարցերով աշխատանքի փորձ ունեցող տեղական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ընտրական վարչակազմի աշխատանքը ծրագրելիս՝ հաշվի ենք առնում միջազգային կազմակերպությունների եւ տեղական անկախ կազմակերպությունների կողմից տրված ընտրություններին Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների հավասար մասնակցության վերաբերյալ հանձնարարականները, որոնց ի պատասխան, մենք մեր իրավասությունների շրջանակներում, մշտապես իրականացնում ենք գործուն քայլեր:



ԿԸՀ-ի կողմից պատրաստած տեղեկատվական-գովազդային բոլոր տեսախոլովակները թարգմանվել են հայերեն եւ աղբյուրներն ու տարածվում են ԿԸՀ-ի կայքում եւ YouTube հարթակում: Ընտրական ժամանակահատվածում տեսախոլովակները ցուցադրվում են հանրային հեռարձակողի կայքէջում եւ տարածաշրջանային հեռուստատեսությունում:

Ընտրական վարչակազմն ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ընտրողներին տեղեկացնելու նպատակով, հայերենով եւ աղբյուրներն ու ԿԸՀ-ի կայքէջում, տարածաշրջանային հեռուստատեսության եւ ռադիոյի, ինչպես նաեւ տպագիր լրատվամիջոցների միջոցով տարածում է ընտրությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Ընտրական ժամանակահատվածում շահագրգիռ անձինք ընտրական հարցերի կապակցությամբ տեղեկատվություն կարող են ստանալ ԿԸՀ-ի կոնտակտ-հարի հայերեն եւ աղբյուրներն խոսող օպերատորից:

Ազգային փոքրամասնությունների տեղեկատվության համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջում տեղակայված է «Տեղեկատվություն ազգային փոքրամասնությունների համար» պաստառը, որտեղ, ըստ տարիների, տեղեկատվություն է ներկայացված վրացերեն, հայերեն եւ աղբյուրներն:

Ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերում բնակվող ընտրողները կարող են ԿԸՀ-ի կայքի «Ընտրողների ցուցակ» էջում (<https://ems-voters.cec.gov.ge/>) վրացերեն, հայերեն եւ աղբյուրներն ստուգել ընտրողների միասնական ցուցակում իրենց անձնական եւ ընտանիքի անդամների տվյալները:

Սկսած 2010 թվականից՝ բոլոր ընտրություններին, տեղամասային ընտրական հանձնաժողովների հայալե-



զու եւ աղբյուրներն անդամների համար բոլոր տեսակի տեղեկատվական-ուսուցողական նյութերն ու ձեռնարկ-հանձնարարականները, որոնք անհրաժեշտ են նրանց գործառույթների իրականացման համար, թարգմանվում են նրանց համար հասկանալի լեզվով:

Քվեարկությանը հավասար մասնակցության համար, հայերեն եւ աղբյուրներն թարգմանվում են ընտրական հետեւյալ նյութերը՝ ընտրողների ցուցակը (պատին փակցվող տարբերակը), ընտրական քվեաթերթիկն ու քվեաթերթիկի լրացման կարգը, քվարկությանը մասնակցություն ցուցադրող պաստառը եւ ազգային փոքրամասնությունների լեզվով թարգմանվում են տեղեկատվական գրքույկներն ու նախագահի դիմումը երիտասարդ ընտրողներին, ինչը տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները բաժանում են ընտրողներին:

Բոլոր ընտրություններից առաջ, տեղեկատվական քարոզարշավի շրջանակներում, անցկացնում ենք հանդիպումներ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերի մուճիցիպալային կենտրոններում ու գյուղերում, որտեղ նույնպես տարածում ենք գրքույկներ՝ վրացերեն, հայերեն եւ աղբյուրներն:

2022 թվականին իրականացված ընտրական բարեփոխման համապատասխան, ընտրական վարչակազմի կամավորի հավաստագիր ունենալը դարձավ պարտադիր տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց եւ անդամների ընտրության համար: Վերոնշյալ օրենսդրական փոփոխության կատարման նպատակով, 2023 թվականից երկրամասերում եւս սկսեցինք անցկացնել հավաստագրման քննություններ:

Ընտրությունների վարչարարության գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավումն ապահովելու համար, տեղամասային ընտրական հանձնաժողովների ղեկավար անձանց ու անդամների հավաստագրային քննությունների համար, հայերեն եւ աղբյուրներն թարգմանվեցին քննական թեստեր, որոնց օգտագործմամբ այդ տարի եւս հայերեն ու աղբյուրներն անկացվեց հավաստագրային քննություն:

Հավաստագրային քննության մասին տեղեկատվությունը տարածվում է տեսախոլովակի տեսքով, վրացերեն, հայերեն եւ աղբյուրներն, տարածաշրջանային հեռուստատեսության միջոցով:

Մեզ համար առաջնահերթ ուղղություն է ընտրողների իրագրվածությունը, ինչը նպաստում է ընտրական գործընթացում քաղաքացիական ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, ընտրողների ակտիվության աճին եւ տեղեկացված ընտրության կատարմանը:

ԿԸՀ-ի ուսումնական կենտրոնը, ընտրական վարչակազմի հետ համատեղ ջանքերով, տարիներ շարունակ իրականացնում է տեղեկատվական-հանրակրթական նախագծեր ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ընտրողների, այդ թվում՝ երիտասարդների եւ կանանց համար:

Մենք գիտակցում ենք հարցի հրատապությունն ու ջանք չենք խնայում ազգային փոքրամասնություններով հոծաբնակ երկրամասերի ընտրողների համար հավասար պայմանների ապահովում: Այդ գործընթացում ընտրական վարչակազմը մեծ նշանակություն է տալիս ներգրավված կողմերի ակտիվ մասնակցությանը: Նշանակալից է, որ ներգրավված բոլոր կողմերը, այդ թվում՝ դուք՝ ընտրողները, համատեղ նպաստեք 2025 թվականին համապատասխան միջազգային չափորոշիչների ընտրությունների անցկացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆՊԵՏԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Սեպտեմբերի 16-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ անցկացվեց խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեցին ռազմավարական կառավարման նոր համակարգի հայեցակարգային հիմնական մոտեցումները:

Խորհրդակցությանը ներկայացվեցին միջազգային ստանդարտներին համապատասխան ռազմավարական կառավարման համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունները, այդ թվում՝ բարելավվումը, մասնակցային ու հաշվետու գործընթացը եւ այլն: Անդրադարձ կատարվեց նաեւ համակարգի ներդրման հետ կապված հարցերին:

Ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման ուղղված հայեցակարգային մոտեցումների վերաբերյալ անցկացվեց մտքերի փոխանակում, ներկայացվեցին տարբեր առաջարկություններ:

Վարչապետը հանձնարարեց քննարկումների արդյունքում բարձրացված հարցերի ու առաջարկությունների հիման վրա հայեցակարգի նախագիծ լրամշակել եւ ներկայացնել հաստատման:

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԼԵՈՆ 14-ՐԴ ՀՈՒՄԻ ՊԱՊԻՆ

Սեպտեմբերի 16-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը Կաստել Փանդոֆոյի Առաքելական պալատում հանդիպել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Լեոն 14-րդ Պապի հետ:



Առանձնագրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Լեոն 14-րդին Հռոմի Պապ ընտրվելու եւ ծննդյան 70-ամյա հոբելյանի առիթով: Գարեգին Երկրորդը Լեոն 14-րդ Պապին հրավիրել է այցելել Հայաստան:

Հրույցի ընթացքում, հովվապետներն անդրադարձել են նաեւ աշխարհում տեղ գտնող արհավիրքներին ու մտահոգիչ զարգացումներին, Հայաստանի եւ հայ ժողովրդի առջեւ ծառայած մարտահրավերներին ու դիմագրավվող փորձություններին:

Վատիկան այցի շրջանակում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը եղել է նաեւ Հռոմի Սուրբ Մարիամ բազիլիկում, ուր երջանակահիշատակ Ֆրանցիսկոս Պապի շիրմի առջեւ աղոթել է նրա հոգու հանգստության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն արձանագրել է, որ երկու եկեղեցիների միջեւ եղբայրական կապերն ամրապնդվել են հանդիպումների եւ հավատքի համատեղ վկայությունների միջոցով՝ հիշեցնելով երջանակահիշատակ Սուրբ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի այցելությունը Հայաստան 2001 թվականին, ապա՝ 2016 թվականին երջանակահիշատակ Ֆրանցիսկոս Պապին Սուրբ Էջմիածնում հյուրընկալելու առթիվ «Այց առաջին քրիստոնյա երկիր» խորագրով ուխտագնացության կապակցությամբ:

Գարեգին Երկրորդը վստահություն է հայտնել, որ երկու եկեղեցիների հարաբերությունները կշարունակեն զարգանալ նույն եղբայրական ոգով ու ջերմությամբ:

ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԿՐՈՒ ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԱՐՄԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 18-ին Հայաստանի կառավարության հերթական նիստում ընդունվեց որոշում, որը պայմանավորված է հանրային տրանսպորտային համակարգի թարմացմամբ՝ ապահովելով էկոլոգիապես մաքուր եւ արդյունավետ ուղևորափոխադրում:

մակարգի զարգացում՝ ավելի մաքուր եւ ցածր աղտոտում ունեցող երթուղիներով, նվազեցնել օդի աղտոտվածությունը:

Տրոլեյբուսները, որպես մաքուր էլեկտրական փոխադրամիջոցներ, կարևոր դեր են կատարելու փոշու եւ աղտոտման նվազեցման, նոր երթուղային ուղեգծերի ներդրման ուղղությամբ: Թվով 45 նոր տրոլեյբուսի գնումը թույլ կտա բարելավել երթուղային հաճախակառուցումը, ընդհանուր ծածկույթն ու ծառայության որակը: Որոշման ընդունմամբ՝ ակնկալվում է ապահովել ավելի ճկուն երթուղային մոդելներ, տրոլեյբուսային կայուն էներգետիկ հա-

կառուցման ներդրումային ծրագրի առաջարկը: Ձեկույցից հետո խորհուրդը քննարկեց նախագիծը՝ ներկայացնելով առաջարկներ եւ դիտարկումներ, որոնք վերաբերում են թանգարանների խանութի ու հուշանվերային արտադրանքի տարբեր բաղադրիչներին, կիրառման մեխանիզմներին ու գործիքակազմին: Նախարարն առաջարկեց նախագիծը մեկ անգամ եւս քննարկել՝ ներկայացված դիտարկումների եւ առաջարկությունների հիման վրա այն լրամշակելուց հետո:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Սեպտեմբերի 17-ին Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում անցկացվեց Թանգարանների խորհրդի առաջին նիստը, որը վարեց խորհրդի նախագահ, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նիստին մասնակցեցին նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, խորհրդի անդամները, նախարարության ոլորտային ստորաբաժանման ղեկավարներ:

Թանգարանների խորհրդի առաջին նիստի օրակարգում ներառված էր մեկ հարց՝ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարանների հուշանվերային արտադրանքի վերաբերյալ: Հարցը զեկուցել է Մշակույթի զարգացման հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Ավետիսյանը՝ հանգամանորեն ներկայացնելով թանգարանային հուշանվերների

կառուցման ներդրումային ծրագրի առաջարկը: Ձեկույցից հետո խորհուրդը քննարկեց նախագիծը՝ ներկայացնելով առաջարկներ եւ դիտարկումներ, որոնք վերաբերում են թանգարանների խանութի ու հուշանվերային արտադրանքի տարբեր բաղադրիչներին, կիրառման մեխանիզմներին ու գործիքակազմին: Նախարարն առաջարկեց նախագիծը մեկ անգամ եւս քննարկել՝ ներկայացված դիտարկումների եւ առաջարկությունների հիման վրա այն լրամշակելուց հետո:

ԷԼԵԿՏՐՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԼԻՑԶՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին նոր օրենքի նախագիծ, որով քաղաքացիներին հնարավորություն է տրվում առանց առանձին բաժանորդագրության՝ բնակարանից իրենց ավտոտնակ անցկացնել էլեկտրաէներգիա էլեկտրամոբիլների լիցքավորման նպատակով:

Սահմանվում է, որ սպառողին մատակարարված (բաշխված) էլեկտրական էներգիան նրա կողմից կարող է սպառվել նաեւ սպառման համակարգի տեղակայման տարածքից դուրս գտնվող եւ իրեն պատկանող ավտոկայանատեղիում ու, որպես ինքնուրույն գույքային միավոր, գրանցված բնակելի նշանակության այլ տարածքում, որի սպառման համակարգի միացումը սպառողի սպառման համակարգին իրականացվում է սպառողի կողմից՝ գործող նորմատիվ իրավական ակտերի պա-

հանջներին համապատասխան: - Նախագիծը նախատեսում է էլեկտրամոբիլների լիցքավորման համար ստեղծել նոր հնարավորություններ՝ նույն սպառողի համար տեխնիկական հնարավորությունների դեպքում ապահովելով լիցքավորման կայանի միացումը էլեկտրական ցանցին անհավելյալ միացման վճարի,- մշել է նախագծի համահեղինակ Ծովհնար Վարդանյանը: Նախագծով հստակ ամրագրվում է, որ էլեկտրամո-

բիլների լիցքավորման ծառայությունը լիցենզավորման ենթակա գործունեություն է, եւ որ յուրաքանչյուր անձ կարող է նման ծառայություն մատուցել:



ՆՈՐԱՆՇԱԿ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԵՐԿՍԱՐ ՍՏԱՆՁՆԵՅԻՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ



Սեպտեմբերի 16-ին երեսնում, Հայաստանի Նախագահական նստավայրում Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ, տեղի ունեցավ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի ու շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեոսյանի երդման արարողությունը: Արարողության ավարտին Նիկոլ Փաշինյանն ու Վահագն Խաչատրյանը շնորհավորեցին նախարարներին՝ մաղթելով բեղմնավոր եւ արգասաբեր աշխատանքի շահ պետության ու ժողովրդի:

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՏՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ԹԵՎԱԿՈՒՆԵՑ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Պաշտոնապես մեկնարկեց «Իմ Քայլը» հիմնադրամի «Մշակութային ճամփորդություն Հայաստանում» ծրագրի երկրորդ փուլը: Մեկնարկի հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ Հայաստանի ազգային պատկերասրահում: Բացման ժամանակ փոքրիկները ստացան խորհրդանշական նվերներ, որից հետո սկսվեց նրանց մշակութային ճանապարհորդության առաջին կայսրանը՝ շրջայն Հայաստանի ազգային պատկերասրահում: Այն ուղեկցվեց «Խճանկարի արվեստը» կրթական ծրագրով, որի ընթացքում երեխաները իրենց չեռքով պատրաստեցին խճանկարներ:

Ծրագրի ընթացքում երեխաները այցելելու են թատրոն, օպերա, բալետ, Մապե-նադարան, հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան, չինական գիտամշակութային կենտրոն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԻ ԹՎՈՎ ՎՐԱՍԱՆԸ ԵՐԿՐՈՐԴՆ Է

Հայաստանի էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի տվյալներով, 2025 թվականի օգոստոսին Հայաստան է այցելել 334 հազար 396 զբոսաշրջիկ: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը եղել է 300 919 մարդ: 2025թ. հունվար-օգոստոսին դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ գրանցվել են Ռուսաստանից (41 տոկոս), Վրաստանից (13 տոկոս) եւ Իրանից (8 տոկոս): Տարվա սկզբից մինչեւ օրս Հայաստան է այցելել 1 մլն 505 հազար 123 զբոսաշրջիկ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

23.09.2025 Սուրբ Կույսեր Փեփրոնեի, Սարիանեի և Մեծ Վարդանի դատեր Շուշանիկի հիշատակության օր

Սուրբ Շուշանիկը Վարդան Մամիկոնյանի ավագ դուստրն էր: Նա ամուսնացած էր վրաց Աշուշա բղեշխի որդի Վարսագենի հետ: Չնայած նրանք 3 տղա և 1 աղջիկ ունեին, սակայն ամուսինը, բղեշխ դառնալով, կրոնափոխ էր եղել և ամուսնացել պարսիկ Պերոզ իշխանի զորանշի հետ, իսկ Շուշանիկն ապրում էր եկեղեցուն կից մի փոքրիկ տնակում՝ մերժելով ամուսնու՝ դավանափոխ լինելու առաջարկները: Սուրբ Շուշանիկն իր կյանքն ավարտեց 470թ. մարտիրոսական մահով: Ըստ Ռխտանես պատմիչի, նրա գերեզմանը Ցուրտավիում է:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

27.09.2025 Սուրբ Գեորգ քաջամարտիկ զորավարի, Արդկոտսի և Ռոմանոս Երզնցողի հիշատակության օր

28.09.2025 Վարազա Սուրբ Խաչի տոն
Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ամեն տարի մեծ հանդիսավորությամբ նշում են Խաչին նվիրված տոները: Բայց, ի տարբերություն մյուս եկեղեցիների, Հայ եկեղեցին ունի նաև Խաչին նվիրված զուտ ազգային մի տոն, որը հայտնի է Վարազա Սուրբ Խաչ անունով: Այն միշտ տոնում են Խաչվերացից երկու շաբաթ հետո, այսինքն՝ սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ն ընկած կիրակի օրը:

ԱՎԱՆԳՈՒՅՑ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-21-ԻՆ ՄՍՅՐԱՔԱՎԱՔԸ ԵՇՈՒՄ Է ԻՐ ԱՎԱՆԳԱԿԱՆ ՏՈՆԸ՝ «ԹՔԻԼԻՍՈՒՄՆ»

Վրաստանի մայրաքաղաքի աշնանային, բերքահավաքին նվիրված, 1979 թվականից պատմության մեջ հաստատուն տեղ զբաղեցրած «Թքիլիսոում» այս տարի նշվում է սեպտեմբերի 20-21-ին:



Ինչպես հայտարարեց Թքիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, տոնը կնշվի Օրբելիանու հրապարակում և Ռիդեի այգում, Աբանոթուբանի և մյուս թաղամասերում: Սեպտեմբերի 20-ին Աբանոթուբանիում կանցկացվի «Թքիլիսիի բազմազանություն» ցուցահանդես-վաճառք, իսկ Ռիդե այգի այցելողներին կդիմավորեն մանկական ներկայացումներ ու զալա համերգ վրացական փոփ երաժշտության մասնակցությամբ: Սեպտեմբերի 20-ին Ղետական արարողությունների պալատում ավանդաբար կանցկացվի պատվավոր թքիլիսիցի-

ն երի պարզեստրման արարողություն, որը կհեռարձակվի հեռուստատեսությամբ, իսկ սեպտեմբերի 21-ին՝ Եվրոպայի հրապարակում կկայանա զալա համերգ: Քաղաքապետը հավելեց նաև, որ, «Թքիլիսոում» նախապատրաստության շրջանակում, երթեկությունը լիովին կսահմանափակվի Չոր կամրջի շրջակա տարածքում, Իտալիայի փողոցում, Գրիգոլ Օրբելիանու հրապարակի շրջակա տարածքում և նախագահի աշխատակազմի շրջակա տարածքում:

7x7 grid with numbers 1-61 in various cells, representing a calendar or schedule.

Խ Ա Չ Բ Ա Ռ

Հորհուսան. 1.«Հեյ, ...ի նըխշուն հավեր» (Ավ.Իսահակյան «Դարդս լացեք»): 4.Կատար, սարի ծայր: 9.Ոչխարի ձագ: 10.Հոգնակիակերտ մասնիկ: 11.ԱՍՆ նախագահ ... Թրամվ: 14.Ամերիկացի ժամանակակից դերասանուհի ... Թուրման: 15.Խաղաթուղթ: 17.«Ես ինչ արի, դու ... Թելո» (Ժող. երգ «Թելո»: 18.Պոկեմոն, ..., պոկի: 19.Ռուս մեծ գրող Եսենինի գրական հերոսուհի: 22.Գերմանացի փիլիսոփա: 23.Բացականչական ...: 25.Շարժանկար, ֆիլմ: 26.Արաբ կուսակալ: 29.Վրաց կույր երգչուհի ... Ղուրցկախա: 30.Կշի չափ: 33.Բարոյախրատական գրական ստեղծագործություն: 34.Թքիլիսիի գլխավոր պատմական մայր տաճար: 37.Ժխտական նախածանց: 38.Գուրգեն Դաբադյանի երգացանկից: 39.Վրացական ֆիլմ «... ես եմ»: 42.Թեթև, կապտավուն-սպիտակ մետաղ, կապար: 44.Հուլիոս Կեսար «Եկա, ..., հաղթեցի»: 45.Մեքենայի մաս: 46.Ամերիկացի արեւելագետ, իրանագետ, հայագետ: 48.Կորիզավոր միրգ: 49.Միջնադարյան հայ բանաստեղծ: 51.Ժառանգականության տարրական միավոր: 52.Քաղաք Ֆրանսիայում: 54.Իսպանացի դրամատուրգ ... դե Վեգա: 55.Երկկենցաղ մուլտիերոս: 56.Ռուս հանրահայտ բանաստեղծ: 58.Հայկական հանրահայտ պար: 59.Կուսակրոն քահանա: 60.Գետ Ուկրաինայում: 61.«... ձեռքդ, թանկագին, ձեռքդ հարագատ» (Խորհրդային բանաստեղծություն):

ՈՒՂԱՆՅԱՆ. 2. Ռուս հայտնի գրող Լ.Տոլստոյի գրական հերոսուհի: 3.Հյուսիսկովկասյան ժողովուրդ: 4.Մեխ, մետաղյա ձող: 5.«Կուժն ..., ելա սարը» (Կոմիտասի երգերից): 6.Սասնա լեռների բարձր գագաթներից: 7.1920 թվականից Թքիլիսոում լույս տեսնող հայալեզու թերթ: 8.«Լուսավոր Հայաստան» կուսակցության ղեկավար ... Մարուքյան: 9.Հովի.թունանյանի բանաստեղծություններից «... երգը»: 10.Միջին Արեւելքի երկրներից: 12.Մակերեսի չափման միավոր: 13.... ու բացասական թվեր: 16.Կաճառ, գիտական, ուսումնական հաստատություն: 20.Ժողովրդական հեքիաթ «Խելոքն ու ...ը»: 21.Թարմ, ոչ հնացած: 24.Կոկորդուն գտնվող նշագեղծ: 27.Պոչ, տուտ: 28.Ֆիրդուսու «Արքաների գիրքը»: 29.Պատիժը գործարող պաշտոնյա: 31.Ժամանակի միավոր: 32.Ժխտական նախածանց: 35.Եվ Իրակլին, Ե՛լ Վասիլին: 36.Ակադեմիա (հայերեն): 37.Աղամի որդիներից: 40.Թքիլիսիի խոջվանքում թաղված Մեծն պատմավիպասանը: 41.Թխվածքի համեմունքի տեսակ: 43.Թքիլիսիի Հայ նկարիչների միության նախագահ ... Օհանջանովա: 44.«Ես ի՞նչ ... ես տեսա» (Հովի. Թունանյան): 47.Րաֆֆու պատմավեպերից: 48.Մաշտոցի զինվորներից: 50.Քոչ, վայրենի: 51.Ձիանշանը՝ ոչ հայերից: 53.Սկան տեսակ: 57.Երկրաչափական մարմին: Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

Վրաստանի խմբագիր, տնօրեն՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Վլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՐՈՍՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՀՅԾԾ ԶՈՆԱՅՅԻՄՈ: ՄԶՈԼՈՏՈ 0105, Զ.ՅՈՒՐԵՅՈՒՆ ԺՅՅԱ 5.
Մեր հասցեն՝ Թքիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹՊԸ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՅՐԱՆՇՅՈՒՆ»
ՄԶՈԼՈՏՈ, ՆԱՅՅՐՄԻՅՈՒՆ
«ՅՐԱՏԱՆ»
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445
Պարբերականում օգտագործվել են վրացական, հայաստանյան, օտարերկրյա մամուլի, ինչպես նաև տեղեկատվական գործակալությունների և համացանցային ծախսերի նյութերը: Խմբագրության դիրքորոշումը կարող է չհամընկնել հեղինակների կարծիքի հետ:

ԽՈՐԸ ՑԱՎՈՎ ՈՒ ԱՓՈՍՍԱՆՔՈՎ

ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՆՆՆՆ

2025 թվականի սեպտեմբերի 12-ին կյանքից հեռացավ թքիլիսահայերին քաջածանոթ, Վրաստանում համահայկական սպորտային շարժման ոգեշնչողներից մեկը՝ Վալերի Հունանյանցը. մարդ, գրող, դրամատուրգ, լրագրող, սպա՝ Թքիլիսիի հրետանային ուսումնարանի շրջանավարտ...



Վալերի Հունանյանցը ապրել է դժվար, բայց աներեակայելի կենսունակ ու հետաքրքիր կյանք: Իր 73 տարիների ընթացքում գրել է բազմաթիվ գրքեր և պիեսներ՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանն ու ճակատագրին, երիտասարդ սերնդի մեջ սերմանել իրենց արմատների նկատմամբ սեր ու հարգանք: Վալերի Հունանյանցը հավատում էր, որ բոլոր հայերը, անկախ նրանից, թե որտեղ են ապրում, հոգեւոր կապ ունեն իրենց հայրենիքի հետ, և ձգտում էր գրականության ու սպորտի միջոցով խթանել ազգի միասնությանը:

Նրա ստեղծագործություններից մի քանիսը՝ թե՛ գրական, թե՛ դրամատիկ, արդեն հրատարակվել են, իսկ ընթերցողներին ու հանդիսատեսին առաջիկայում եւս նոր հանդիպումներ են սպասվում: Նրա բոլոր չիրատարակված ստեղծագործությունները, անշուշտ, լույս աշխարհի կգան, և ընթերցողները կրկին հաղորդակից կդառնան գրողի ստեղծագործություններին, որոնք լցված են իր ժողովրդի հանդեպ մեծ սիրով ու նվիրումով:

Նա աշխատեց մինչև իր կյանքի վերջը: Գրում էր՝ չնայած վերջին ամիսներին ծանր հիվանդ էր:

Իսկ այն մարդիկները, որոնց նա սիրում էր՝ ինչպես իր սեփական զավակները, վստահ ենք, որ նրանք իրենց սրտերում ապագա հաղթանակները կնվիրեն Հունանյանցի հիշատակին:

Նա սիրված ու հարգված էր, ուներ եւ շարունակում էր ձեռք բերել նոր ընկերներ... Վալերիի անկեղծությունն ու բաց սիրտը ոչ մեկին անտարբեր չէին թողնում:

Գնաս բարով, սիրելի Վալերի: Մենք միշտ կհիշենք քեզ ու կշարունակենք քո գործը:

ՄԻ ԽՈՒՄԱՐ ԸՆԿԵՐՆԵՐ

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեն, Համահայկական խաղերի Թքիլիսյան կոմիտեն, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Պ.Ադամյանի անվան պետ-հայրերամայի թատրոնը, Երեւանի Կ.Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնը խոր վշտով ցավակցում են Համահայկական խաղերի թքիլիսյան կոմիտեի նախագահության անդամ Վալերի Վալդիմիրի ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ մահվան կապակցությամբ և վշտակցում հանգուցյալի ընտանիքի անդամներին, հարազատներին ու բարեկամներին: